Ջան, Վարդավառ, վարդավառ

Վարդ ի բացվե առավոտվան խաղերով,
Իմ յար բաղջեն վարդ կը քաղի մաղերով:

Ջան, Վարդավառ, վարդավառ,
Մեր դռանը ոսկի ծառ,
Ջան, Վարդավառ, վարդավառ,
Ոսկի բլբուլ վրեն թառ:

Վարդն ի բացվե Վարթեվրվան կիրակին,
Քո սերն ինկէ մեջ իմ սրտի պուրակին:

Ջան, Վարդավառ, վարդավառ,
Մեր դռանը ոսկի ծառ,
Ջան, Վարդավառ, վարդավառ,
Ոսկի բլբուլ վրեն թառ:

Նազլու ախչիկ, նազ մի էնե, վառեցիր,
Աչք ու ունքով սիրտս մեկեն հանեցիր,

Ջան, Վարդավառ, վարդավառ,
Մեր դռանը ոսկի ծառ,
Ջան, Վարդավառ, վարդավառ,
Վարդ կքաղեմ քեզ համար:

Խաղդ՝ կրակ, ձենըդ՝ անուշ սարի հով,
Աստված սիրես՝ ինձ մի քցե սիրու ծով:

Ջան, Վարդավառ, վարդավառ,
Մեր դռանը ոսկի ծառ,
Ջան, Վարդավառ, վարդավառ,

Վարդ կքաղեմ քեզ համար: